ոլոր ժողովուրդներին: Գիտությունը, տուրան և արվեստը դարձել են բոլորդկանց սեփականությունը: Այն էոգևոր դարձ հաստատումը, որը ՍՍՌՄ ժողովուրդների զարգացման համար բնորոշ էր զաղ շինարարության տարիներին, շարունակվել ու բազմապատկվել է պատերազմի մանակ:

Սովետական ժողովուրդը հսկայական գոբյունը Սովետական Միության ուժի աղբյուրներից մեկն է: Ճակատամարտերի դաշտերում, աշխատանքի ճակատում էլ ավելի է կոփվել սովետական ժողովուրդների բարեկամությունը, որոնք գնում են վերջնական հաղթանակի ընդդեմ գերմանա-ֆաշիստական զավթիչների:

(«ՊՐԱՎԴԱՅԻ» նոյեմբերի 28-ի առաջնորդողը)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎԸ

Նոյեմբերի 29-ին կայացավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամների առաջին ընդհանուր ժողովը: Ժողովը ներածական ջերմ խոսքով բացեց Ակադեմիայի ավագագույն անդամ, խոշոր հայագետ, ակադեմիկոս Ս. Ս. Մալխասյանը, որը խորին շնորհակալություն հայտնեց առաջնորդ ընկեր Ստալինին Հայաստանի կուլտուրայի զարգացման մասին ունեցած նրա ամենօրյա հոգատարության համար:

Ժողովն ընտրեց Ակադեմիայի ղեկավարությունը՝ պրեզիդենտ, վիցեպրեզիդենտներ և բաժանմունքների նախագահներ:

Ակադեմիայի պրեզիդենտ միաձայն ընտրվեց ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին, վիցեպրեզիդենտներ ընտրվեցին ակադեմիկոսներ Վ. Հ. Համբարձումյանը և Վ. Հ. Գուլֆանյանը: Ակադեմիկոս Ս. Կ. Կարապետյանը միաձայն ընտրվեց Նախագահության անդամ:

Ֆիզիկո-մաթեմատիկական և բնական գիտությունների բաժանմունքի նախագահ ընտրվեց ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովը, բիոլոգիական գիտությունների բաժանմունքի նախագահ՝ ակադեմիկոս Խ. Ս. Կոշտոյանցը, գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի նախագահ՝ ակադեմիկոս Մ. Գ. Թումանյանը, հասարակական գիտությունների բաժանմունքի նախագահ՝ ակադեմիկոս Գ. Ա. Ղափանցյանը:

Ժողովը գաղտնի քվեարկությամբ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամ ընտրեց ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վլադիմիր Լեոնտևիչ Կոմարովին: